ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Գարնանային եղանակաց բացուելուն և զատկական տօնի մերձենալուն պատճառաւ Լիւրոպացի ճանապարհորդներ և ուխտաւորներ սկսած են արդէն յաճախել Ի սուրբ [illegible]։

— Ներկայ ամսոյս մէջ նոր Դատաւոր (Մոլա) եկաւ քաղաքիս համար, որուն դիմաւորեցին իւրաքանչիւր ազգայ թարգմանները եւ մանաւանդ բազմաթիւ մահմեդականներ և շքեղ ընդունելութեամբ անոր գալուստը պատուեցին։

— Ղալաթեան Դեր. Սրբազան Սարգիս արքեպիսկոպոսը Յոպպէի նաւահանգիստը հանդիպելով գնացած է Աղեքսոս, ուրկէ քիչ ժամանակէն յետոյ պիտի քաղաքս գայ յուխտ և յերկրագածութիւն սրբազան Տեղեաց։

— Թուական ժամանակէն յառաջ երկրագործական Ընկերութիւն մը կազմուած էր քաղաքիս մէջ և խընդիր առաջարկելով Դամասկոսի կուսակալութեանը՝ վաւերացումն խընդրած էր։ Այս վաւերացման հրամանագիրը ընդունուեցաւ Ներկայ ամսոյս մէջ և յիշեալ ընկերութիւնը մոտիկ է շուտով ձեռնարկել գործոյն։

— Սուրբ Աթոռոյս վարժարանի պարգեւաբաշխութեան հանդիսի օրը՝ Երշակ Յովսեփեան, Մերուժան Պօղոսեան, Մարտիրոս Յակոբեան և Կարապետ Կարիկեան աշակերտները, իրենց համար նշանակուած պարգեւները Թաժանողաց ձեռքէն ընդունելով և Հանդիսականաց առջեւ վերոտին սեղանին վրայ ձգելով խիստ մեծ ցաւ պատճառեցին ականատեսներուն իրենց յաղգնութեամբ և ապերախտութեամբ, այնպէս որ, յետ հանդիսին քանի մի ուխտաւորներ առաջարկեցին Սրբազան Պատրիարքին այս հրապարակական ապերախտութեան ցոյցը պատժել Ի խրատ այլոց աշակերտաց։ Ներին Սրբազնութիւնը քանի մը բարձրաստիճան միաբանից հետ խորհրդակցելով որոշեց իսպառ արձակել զանոնք դպրոցէն, մանաւանդ երբոր Վարժարանի տեսչութեան արձանագրութենէն տուգեց՝ թէ յիշեալ աշակերտները քանի մի անգամ իրենց աշակերտութեան շրջանին մէջ սոյն օրինակ թերութեանց մէջ գտնուած ու յանդիմանուած են, բայց դժբաղդաբար ապարդիւն եղած է։

Ուստի այս վերջին յանդգնական ցոյցը անտանելի ըլլալուն և մանաւանդ օտար հանդիսականաց առջեւ նախատինք բերելուն համար՝ ստիպուեցաւ Սրբազան Պատրիարքը սոյն միջոցը ձեռք առնուլ։ Սոյն աշակերտներէն Կարապետ Կարիկեանը իւր բնական հիւանդութեամբ պատճառաւ արդէն բժշկայ խորհրդով որոշուած էր իւր հայրենիքը դարձնելու և միայն հարցաքննութեան կ'ըսպասուէր։

— Ամսոյս մէջ երկու աշակերտացու պատանեակներ կարեւոր վկայագրով հանդերձ Ս. Աթոռս ժամանեցին և ընդունուեցան ժառանգաւորաց դասրոցը։ Ահա բժշկի վկայութիւնը նոցա առողջութեան մասին։

«Սարգիս Ստեփանեան Թալասցի 14 ամեայ և Աշեցի Ղազարոս մահտեսի Սարգիսեան 13 ամեայ պատանեակները լաւ բժշկական օրինաց քննութեան ենթարկելով քաջառողջ և ամրակազմ գտայ։

Ս. Գիլեաղճեան Բ. Սրբոյ Աղեքսանդրայ»։

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Նոր ճաշակ դպրութեան, կամ Ճարտասանութիւն առ ձեռն։

Նարեկ միջադիր։

Ցանկացողք կարող են գնել սոյն գրքեանքը, ինչպէս Պոռէս, նոյնպէս և իւր գործակալներէն զանազան քաղաքաց մէջ։

ՄԱՄԼՈՅ ՅԱՆՁՆՈՒԱԾ

Քերականութիւն Հայ — Գաղ.

Գաղմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ։

Ատենի Յամագիրք։

Ընդհանրական Ներսիսի Շնորհալւոյ։

Ցիշեալ մատենից տպագրութիւնը արդէն աւարտուելու վրայ է, որոց ընտիր և խնամով տպագրութեան մասին յետոյ պիտի խօսինք։

ՉՈՒԱՐԱԿԱԼԻՔ

(Շարունակութիւն տես թիւ 1)։

8. Քանի մի զինուորներ պատերազմի ատեն գիւղի մի մէջ կը բնակէին, խեղճ գիւղացիի մը պատահելով զայն գանակոծելէն վերջը անոր ստակն ու վերարկուն առին։ Գիւղացին ալ գընդապետին մեկուն գանգատելու գնաց, որնոր ըսաւ անոր, բարեկամ, երբ զինուորներս զքեզ կողոպտեցին, այս զգեստը վրադ էր։ Այո՛ տէր իմ, պատասխանեց, գնա ուրեմն ու ապահով եղիր, ըսաւ գնդապետը, որ իմ զինուորներս չէին, ապա թէ ոչ մինչուկ շապիկդ ալ կ'առնէին։

9. Ընտիր երիտասարդ մը նամակ գրել կուղեր իւր մէկ բարեկամին, և ինչպէս ընելիքը չգիտէր, նամականի մի գնեց, և իւր բաղձանքին համեմատ նամակ մի գրաւ և Ճշդիւ օրինակեց զայն, և խրկելու տեղը խրկեց, յիշեալ բարեկամը որ մի եւ նոյն գիրքը ունէր, ա նոր մէջ գտաւ այս նամակը, և անոր սա խօսքերով պատասխանեց. "պարոն, նամակդ ստացայ, թուղթը դարձուր և անոր պատասխանը կը գտնաս"։

10. Յովսէփ Կայսրը, Գաղղիոյ քաղաքներէն մեկին իւր մարդիկներէն յաւաչ հատած ըլլալով, պանդոկապետը որ զուարթ բնութի մի ունէր, հարցուցա նոր, կայսեր քովի մարդիկներէն ես. պատասխանեց թէ ոչ։ Քիչ ժամանակէ մ[illegible]ը իւր սենեակը մտաւ, մօրուքը ածիլելու զբաղած ատենը հարցուց անոր, կայսեր քով պաշտօն մի ունիս. այո՛, պատասխանեց ինքնակալը, երբեմն կը սափրեմ։

11. Գիւղացի մը իւր ցաւին համար բժշկին խրատ հարցնելու կ'երթայ. բժիշկը հիւանդութիւնը քննելէն վերջը, գրոսեղանին առջեւ նստաւ, և անոր հիւանդութեան վերաբերեալ ատմնակ մի գրեց, և անոր տալով ըսաւ՝ վաղը առաւօտ ասիկայ կեր և շուտ մի առողջութիւն կը գտնաս։ Գիւղացին կարծելով որ նոյն իսկ դեղ՝ թուղթն էր, մեծ յուսով ետ դարձաւ միւս օրը առաւօտ կանուխ կուլ տուաւ զայն և կատարեալապէս առողջացաւ։

12. Աշնուական աղքատ մի պարտատէրներուն իւր պարտքը չը կրնալով հատուցանել, առտու մի կանուխ ելնելով կըսէր. անոց ամեն ալ սատանան տանի, որ այսօր ինձմէ դրամ խնդրելու պիտի գան։ Այս խօսքը լսմնցուներլուն պէս օկսան դուռը զարնել. բացաւ դուռը և տեսաւ որ իւր չորս պարտատէրները ներս մտան, որոնք առնելիքնին պահանջել սկսան ըսելով՝ թէ տակաւին մոռնալու ենք զմեզ. կ'երդնում, ըսաւ անոնց աշնուականը, որ քիչ մի յառաջ ձեր վրայ կը մտածէի։

(Պէրի շարունակ-է)։